

**ՓԱՐԲԱՍՆԵՐԸ ՄԵՂԲ Է**

«Ինչո՞ւ կը դատես եղբայրդ, կամ ինչո՞ւ զայն կ'արհամարհես» (Հռոմ. 14.10):

Արդ դուն, որ մեղքերով դատուած եւ դատապարտուած ես, չե՞ս տակար եւ չե՞ս դողար ուրիշներու դատաստանը կատարելէ, որովհետեւ մարդ մը չէ որ դուն կ'արհամարհես եւ կ'անարգես, այլ՝ Աստուած եւ իր պատիւն ու հեղինակութիւնը յափշտակելէ ետք իր դատը կը տեսնես առանց յիշելու Սուրբ Աւետարանի խօսքը, որ կ'ըսէ. «Մի դատէք ուրիշները որպէսզի Աստուած ձեզ չդատէ, որովհետեւ ինչ սկզբունքով, որ ուրիշները կը դատես, Աստուած անով պիտի դատէ ձեզ» (Մատթ. 7.1): Դատելը սուրբերուն կը պատկանի, իսկ յանդիմանելը՝ ամբաստաններուն եւ ասիկա պէտք է ըլլայ առանձնապէս ու աղերսանքով. ոեւէ մէկը իր մեղքերուն համար հրապարակաւ պէտք չէ յանդիմանել կամ գաղտնօրէն ուրիշներուն ականջին պէտք չէ բամբասել: Կան նաեւ սարսափելի մեղքեր եւ անօրէնութիւններ: Ան, որ մարմնական պակասութիւն մը ունի եւ ուրիշները պակասութեամբ կը նախատէ, արդարեւ ուրիշներէ առաջ ինքզինք նախատած կ'ըլլայ: «Կեղծատր, նախ աչքիդ մէջէն գերանը հանէ, որ կարենաս յստակ տեսնել եւ ասպա միայն եղբօրդ աչքին շիւղը հանէ»: Մատթ. 7.5: ( ՃԱՌԵՐ 3. Մանդակունի)

**ԿԱԹՈՂԻԿԷ**

Եկեղեցոյ ընդհանրականութիւնը կը նշանակէ կաթողիկէ, այսինքն՝ բոլորին պատկանող:

Հայց. եկեղեցոյ պարագային, կրկնակ իմաստ եւ նշանակութիւն ունի կաթողիկէ բառը:

Ընդհանրական ստորոգելին գատ, քաղաքի մը Մայր եկեղեցին նաեւ կոչուած է կաթողիկէ: Այս անուանումը առաջին հերթին տրուած է Ս. Էջմիածնին Մայր տաճարին շէտելով անոր հանգամանքը, թէ բոլոր հայութեան կը պատկանի: Կաթողիկէ կոչուած է Անիի գլխաւոր Մայր եկեղեցին եւ մեր պատմութեան բոլոր Մայր եկեղեցիներն ու տաճարները:

Այստեղ որպէս լուսաբանութիւն կ'ուզենք արձանագրել, որ կաթողիկէն պէտք չէ շփոթել կաթողիկոսութեան հետ, ինչ որ բնորոշիչն է Լատին Եկեղեցոյ եւ որուն հոգետր գերագոյն պետն է Պապը, որ կը բազմի Վատիկանի մէջ Իտալիա:

**ԿԱՆԹԵՂ**

Անցեալին, եկեղեցիներէն ներս կանթեղներու գործածութիւնը շատ աւելի ընդհանրացած էր, որովհետեւ ամենք, մոմերուն հետ, եկեղեցին լուսաւորող գլխաւոր միջոցներէն էին:

Յաջորդ նիւթը 48-րդ թիւին մէջ:

**ՀԱՍՅԷ.**



**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Եւ. 29.11-20: Փիլ. 4.8-28:

**ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 11. 1-13**

**ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 11. 1-13**

Պատահեցաւ, որ Յիսուս տեղ մը կ'աղօթէր: Երբ աղօթելը վերջացուց, իր աշակերտներէն մէկը ըսաւ. «Տէ՛ր, մեզի աղօթել սորվեցո՛ւր, ինչպէս որ Յովհաննէս իր աշակերտներուն սորվեցուց»:

Յիսուս ըսաւ. «Երբ կ'աղօթէ՛ք, ըսէ՛ք. Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի անունդ, թող գայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ, այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը շնորհէ՛ մեզի օրէ օր: Եւ ներէ՛ մեր մեղքերը, քանի մենք ալ կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ, փորձութեան մէջ իյնանք, այլ մեզ չարէն ազատէ՛ք»:

Եւ ապա շարունակեց. «Ենթադրեմք, թէ ձեզմէ մէկը բարեկամ մը ունի, որուն կը դիմէ գիշեր ատեն ու կ'ըսէ. “Բարեկամ, ինծի երեք հաց փոխ տո՛ւր, որովհետեւ նամբորդ բարեկամ մը տունս իջեւանեցաւ եւ ես հրամցնելիք բան չունիմ”»: Անիկա ներսէն կը պատասխանէ ըսելով. “Մի՛ յոգնեցնեք զիս: Դո՛ները արդէն իսկ գոցած եմ եւ փոքրիկներս բովս անկողինին մէջ են, հետեւաբար չեմ կրնար ելլել տալ քեզի”:

Վստահ եղէ՛ք, որ նոյնիսկ եթէ բարեկամութեան սիրոյն չեղլէ եւ անոր ուզածը չտայ, սակայն թախանձանքներուն տեղի տալով պիտի կատարէ անոր խնդրանքը: Եւ ես կ'ըսեմ ձեզի. «Խնդրեցէ՛ք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտոցեցէ՛ք եւ պիտի գտնէ՛ք, բախեցէ՛ք եւ պիտի բացուի ձեզի: Որովհետեւ խնդրողը պիտի ստանայ, փնտոողը պիտի գտնէ եւ բախողին առջեւ դուռը պիտի բացուի»: Զեր մէջ կա՞յ հայր մը, որուն զաւակը ձուկ ուզէ եւ ինք ձուկի փոխարէն օձ տայ եւ կամ կարի՛ն տայ՝ երբ զաւակը հաւկիթ խնդրէ: Արդ դու՛ք, որ այսքան չար էք եւ գիտէ՛ք ձեր զաւակներուն լաւ պարգեւներ տալ, վստահ եղէ՛ք, որ ձեր երկնաւոր Հայրը շատ աւելի լաւ պարգեւ մը՝ Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որոնք իրեն կը դիմեն»:

«Ընծայումն Ա. Աստուածածինի»

Ըստ աւանդութեան, Մարիամ Աստուածածին գաւակն էր Յովակիմի եւ Աննայի: Ան ուխտով ստացուած գաւակ ըլլալուն համար ծնողքը իրենց ուխտին համաձայն, Մարիամը ընծայած են տանար երբ ան երեք տարեկան էր, որպէսզի հոն աստուածապաշտութեամբ զարգանայ ու տանարին ծառայէ:

Այս նուիրման օրն է, որ կը յիշատակուի Աստուածածինի ընծայման օրը որ կը կատարուի ամէն տարի անշարժ թուականի մը, Նոյեմբեր 21-ին, որ օրն ալ հանդիպի այդ թուականը:

Ընծայման տօնը Աստուածածինի նուիրուած տօներէն մէկն է: Անկէ անկախ՝ կան նաեւ Աստուածածնի կեանքն ու տիպարը ծանօթացնող եւ յիշատակող այլ տօներ, ինչպէս՝ Յղութեան տօն, Ծնունդ Ա. Աստուածածինի, Աւետում, Վերափոխում, Գիւտ գօտիի եւ Գիւտ տուփի:

ՅԻՄՆԱԿԻ

Յիսնակ բառը կը վերաբերի յիսուն թիւին: Ան իրապէս ալ յիսուն օրերու վրայ երկարող ժամանակամիջոց մըն է, որ կը կանխէ Աստուածայայտնութեան կամ Ծննդեան տօնը: Իրապէս ալ, Յունուար 6-էն դէպի ետ համբելով յիսուն օրեր, մենք պիտի յանգինք Նոյեմբեր 18-ին, որ Յիսնակի առաջին օրն է: Հայաստանեայց Եկեղեցին կը տօնէ Բարեկենդան Յիսնակաց Պահոց, այսինքն՝ Յիսնակի առաջին օրուան ամէնէն մօտ գուգադիպող Կիրակին: Ժամանակին, Յիսնակը Մեծ Պահի նման ամբողջութեամբ պահի շրջան մըն էր, սակայն այսօր անոր ընթացքին կը գտնուին պահի երեք շաբաթներ միայն: Առաջինը՝ Յիսնակաց պահ անունով, երկրորդը՝ Սուրբ Յակոբի պահ, իսկ երրորդը՝ Ծննդեան:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆՆ ԲԱԾԻՆ

ԻՆՉ Է ԱՂՕԹՔԸ

Աղօթքը լեզուն է երկինքին ու անոր սուրբ Գահակալին: Առանց այդ լեզուն գիտնալու չենք կրնար Աստուծոյ հետ հաղորդակցութեան ու յարաբերութեան մէջ ըլլալ: Աղօթքը, մեր երկնատր Հօրը թելերուն տակ մտնել է: Աղօթքը, մեր հոգիին հաղորդակցութիւնն է Սուրբ Հոգիին հետ: Աղօթքը, մեր սրտին միացումն է Յիսուսի սրտին հետ:

Աղօթքը արարածին երկխօսութիւնն է իր Արարիչին հետ: Ահա թէ ինչու, հաւատացեալ մարդը պէտք է զգուշանայ մենախօսութենէն աղօթքի պահուն: Ի՞նչ պիտի ընէիր եթէ քովդ մէկը զար եւ մէկ ժամ խօսէր եւ ասպա ձգէր երթար, առանց առիթ տալու քեզի որ բառ մը ըսէիր: Աղօթքի պահուն, հաւատացեալ մարդուն նպատակը պէտք է ըլլայ՝ Աստուծոյ ձայնն ու խօսքը լսելը, եւ ո՛չ թէ իր ձայնն ու խօսքը Աստուծոյ լսելի դարձնելը: Աւելի կարեւոր է, որ մենք լսենք Աստուծոյ ձայնը քան Աստուած՝ մեր ձայնը, որովհետեւ Աստուած արդէն գիտէ, թէ ի՞նչ պիտի խնդրենք ու ի՞նչ պիտի ըսենք, սակայն մենք չենք գիտեր, թէ Աստուած ի՞նչ պիտի ըսէ կամ պատուիրէ: Ահա թէ ինչու, յատուկ ճիգ պէտք է թափենք սրելու ու մարզելու մեր հոգիի ականջները, որպէսզի կարենանք լսել Աստուծոյ ձայնը:

ՄԻՇՏ ՊԷՏՔ Է ԱՂՕԹԵՆՔԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՌԱՆՅ ՎՀԱՏԵԼՈՒ

ՀՈԳԵԻՈՐ ՊԱՏԳԱՍ

ՄԵՐ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԿՐ ՊԱՐՏԻՆՔ ՀՕՐ, ՈՐԳԻՒՆ ԵՒ ՍՈՒՐԲԵ ՀՈԳԻՒՆ ՀԱՐԱՍԱՐԿՊԷՍ

Դռնապանը դուռը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին (Յհ 10.3): Դռնապանը մեր երկնատր Հայրը ինքն է: Հայրը ինքն էր, որ կամեցաւ բանալ եւ բացաւ փրկութեան դուռը ոչխարներու դիմաց: Իսկ Որդին իր հովիւի ձայնը լսելի դարձնելով՝ դէպի իրեն քաշեց ոչխարներս: Հոս հանդէս կու գայ Երրորդութեան անձերէն իւրաքանչիւրին դերը, ինչպէս նաեւ մեր դերը՝ մեր անձերու փրկութեան մէջ: Հայրը կամեցաւ մեր փրկութիւնը, Որդին իրագործեց մեր փրկութիւնը, Հոգին օգնեց, որ ընդգրկողները ըլլանք այդ փրկութեան: Այլ բացատրութեամբ մը, մենք կը կամենանք փրկուիլ, Հոգին մեզ կ'առաջնորդէ Որդիին եւ կ'օգնէ, որ մեղքերու քաւութիւն ստանանք եւ փրկուինք, Որդին կը քաւէ եւ կը փրկէ, իսկ Հայրը քաւուածն ու փրկուածը կ'ընդունի:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ ՀՈԳԵԻՈՐ ԴԱՍԸ

Փրկութեան համար, չփառաբանենք Երրորդութեան անձերէն մէկը միւսէն աւելի: Երեքին ալ հաւասարապէս շնորհակալ ըլլանք եւ փառք տանք:

ԵԹԷ ԻՆՔՉԻՆՔԻ ԱՏՈՒԾԹՅՈՒՆ Կ՛ՈՒՉԵՍ ՅՆՆՉՆԵԼ, Կարդա՛ ՍԿՂՄՈՍ 43

Արդարութիւն ըրէ ինձի, ո՛վ Աստուած, անհաւատ մարդոց դէմ իրատնքս պաշտպանէ՛ եւ փրկէ՛ զիս նենգաւոր ու անիրաւ մարդոցմէ: Դուն ես նեցուկս, ո՛վ Աստուած, ինչո՞ւ համար զիս կ'անտեսես, ինչո՞ւ համար սրտում ըլլամ, երբ թշնամին կը նեղէ զիս: Քու լոյսդ եւ ճշմարտութիւնդ դրկէ, որպէսզի զիս առաջնորդեն եւ բերեն քու սուրբ լեռդ, տաճարդ՝ ուր կը բնակիս: Հոն՝ սեղանիդ քով պիտի գամ, ո՛վ Աստուած, դուն՝ իմ ուրախութիւնս եւ ցնծութիւնս, եւ քնարով պիտի գովերգեմ քեզ, ո՛վ Աստուած, իմ Աստուածս: Հետեւաբար ինչո՞ւ տխրիմ, եւ կամ ինչո՞ւ խռովիմ, Աստուծոյ պիտի յուսամ եւ վերստին գովերգեմ զայն, ըսելով.- «Փրկիչս ես դուն, իմ Աստուածս ես»:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

Երբ բանաս սուրբ Աւետարանը ընթերցելու համար յիշէ, որ ան է որ պիտի որոշէ քու յաւիտենական վիճակդ: Անով է, որ պիտի դատուինք: Այստեղ անոր նկատմամբ մեր ունեցած վերաբերմունքին համեմատ պիտի հատուցուի մեզի կամ յաւիտենական երանութիւն, եւ կամ յաւիտենական պատիժ: (Իգնատի Բրեանչանիւով):